

ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՂՔ ԵՎ ՔԱՇՈՒՆԻՔ ԳԱՎԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

ԱՐՄԵՆ ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ

Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին մասնակցել են մեծ ու փոքր բազմաթիվ ցեղախմբեր: Դրանց մի մասը եղել է Սյունիքում, որտեղ այդ պրոցեսը համեմատաբար երկարատև ընթացք է ունեցել, քան Հայաստանի կենտրոնական շրջաններում: Դրանում, թերևս, որոշակի դեր է խաղացել աշխարհագրական միջավայրը և, հավանաբար, ինչպես ժամանակին նշել է Ն. Ադոնցը, հարևան լեռնային երկրներից տարբեր էթնիկական խմբերի անընդհատ հոսքը դեպի Սյունիք¹: Պատմագիտության մեջ ընդունված է, որ Սյունիքի տեղանուններից շատերն ունեն էթնիկական ծագում: Բացառությամբ չի կազմում թերևս նաև Բաղքը, որի ստուգաբանությունն անդրադարձողները հիմնականում ընդունել են հիշյալ տեսակետը: Կարծիքների տարբերությունն այն է, որ Բաղք և «բաղ»-ով կազմված տեղանունները առաջացած են համարում տարբեր ցեղանուններից:

Իսկա՞նք գավառի անունը ստուգաբանելու առաջին փորձը արել է Ս. Օրբելյանը. «...մի ոմն ի զարմիցն Սիսական Բաղակ անուն, առեալ զայս գաւառ մասն ժառանգութեան՝ շինէ զքարն Բաղակու ամրոց, որ կոչի Բաղակի քար. և ամրացուցանէ զքերդն և կոչէ Բաղաքերդ. և գաւառն յիւր անուն կոչեցաւ Բաղաց գաւառ»²:

Ղ. Ալիշանն այս կապակցությամբ գրել է. «Հնութեան ցոյցս ունի անունն, որոյ նախատիպն էր Բաղ յորմէ Բաղք և Բաղակ, և ոչ ի Բաղակայ՝ Բաղ»³: Անելով այս արժեքավոր և տեղին դիտողությունը, Ղ. Ալիշանը թերևս հակված է ընդունելու Ս. Օրբելյանի վկայությունը, որովհետև մի առիթով նա դրում է. «Ձիք երկբայել զի ի սկզբան շինութեան և բնակութեան աշխարհին՝ նահապետն Բաղակ՝ յորմէ Բաղաց գաւառին անուն, աստ հաստատեաց կամ կառոյց զքոյն իւր ի Քարն Բաղակայ, որ յետոյ Բաղաքերդ, և վերջին ապաստան աղատորբերոյն Սիւնեաց. և բովանդակ գետահովիտ Չաւրնդուրի վիճակէր տոհմի նորա, յետոյ բաժանեալ յերիս կամ ի չորս գաւառս, ի Բաղք-Աճանան, ի Բաղք-Քաշունիս, ի Կովսական և ի Զորս»⁴: Հետագայում այս կարծիքը կրկնել է Ս. Էփրեկյանը⁵:

¹ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 423:

² «Պատմություն նահապին Սիսական, արավրեալ Ստեփաննոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 13:

³ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 273:

⁴ Նույն տեղում, էջ 290: Ղ. Ինճիճյանը նույնպես անդրադարձել է Ս. Օրբելյանի վերոհիշյալ վկայությանը, սակայն, առանց որևէ կարծիք հայտնելու (Ղ. Ինճիճյան, Ստորագրություն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 282—283):

⁵ Ս. Էփրեկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, Վենետիկ, 1903, էջ 385:

Ի. Շոպենը Մ. Խորենացու տվյալների հիման վրա ենթադրել է, որ պարթև Արշակ թագավորի եղբայրը՝ Վաղարշակը, երբ նշանակվում է Հայաստանի թագավոր, իր հետ գաղթականություն է բերում Բալի քաղաքից, որի պատճառով էլ այդ անունը տարածվում է Հայաստանում⁶։ Ի. Շոպենը այսպիսի եզրակացության է հանգել, ելնելով Բալի քաղաքի և Բաղք անունների նմանությունից։

Կ. Շահնազարյանի կարծիքով գերմանական Գոթ (Goths) կոչվող ցեղերը մ. թ. ա. VII—VI դդ. եկել են Հնդկաստանից և միառժամանակ մնացել Պարսկաստանի Գերման (Քիրման) նահանգում, այնուհետև Հայաստանի և Կովկասի վրայով անցել Եվրոպա։ Նա բազմաթիվ նմանություններ է տեսնում Սյունիքի տեղանունների և գերմանական ցեղանունների միջև, գերմանացիների և սյունեցիների կենցաղի և մարդաբանական տիպի միջև։ Կ. Շահնազարյանը Bal-amir (Բաղ-ամիր) ցեղանունից է բխեցնում Բաղաբերդ և Բաղք անունները⁷։ Այս ենթադրությունը նա արել է ելնելով սոսկ անվանաձևերի նմանությունից։

Ն. Ադոնցը Բաղասճիք (տարընթերցում Բաղասիճք) ցեղանունից է ծագած համարում Բաղասական և Սյունիքում «բաղ»-ով կազմված տեղանունները⁸։ Գ. Ղափանցյանը համամիտ չէ Ն. Ադոնցի հետ։ Նա այն կարծիքն է հայտնում, որ խեթական սեպագիր արձանագրություններից հայտնի pala (պալա) կամ bala (բալա) ցեղը, որն ապրել է խեթերից արևելք ընկած շրջաններում մ. թ. ա. VIII դ. հետո, կիմերների և այլ ցեղերի ճնշման հետևանքով զաղթել է այլ վայրեր։ Այս տեղաշարժի պատճառով պալա ցեղի անունը պահպանվել է Հայկական լեռնաշխարհում Բալախոռ, Բալահովիտ, Պալունի, Պաղին, Պաղանական տուն, Բաղեշ, Պալակացիո (Պալակացիս), Բալա-կարա կամ Կարա-բալա (Ղարաբաղ), ինչպես նաև Բալան-ռոտ կամ Ռոտի-բալա տեղանունների ձևով։ Նա այս ցեղանունից է ծագած համարում նաև Սյունիքի Բաղաց աշխարհ, Բաղաց տուն, Բաղաց երկիր, Բաղակու քար. Բաղաբերդ անվանումները⁹։ Այսպիսով, ի տարբերություն Ն. Ադոնցի, Գ. Ղափանցյանը, փաստորեն, կապ չի տեսնում Սյունիքում «բաղ»-ով կազմված տեղանունների և Բաղասականի միջև։ Բ. Ուլուբաբյանը հավանական է համարում Գ. Ղափանցյանի վարկածը և ընդունում այդ կապը¹⁰։

⁶ И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, էջ 67, ծան. 1։

⁷ «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան եպիսկոպոսի Սիւնեաց», ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբը Կարապետ վրդ. Շահնաղարեանց՝ միաբան սրբոյ էմիաժին, Փարիզ, 1859, էջ 21—24։ Մնացած բոլոր դեպքերում օգտագործված է 1910 թ. հրատարակությունը։

⁸ Н. Адонц, Егип. азбука, էջ 423։ Ս. Կանայանցը նույնպես հավանական է համարում Բաղասական անվան կապը Սյունիքում «բաղ»-ով կազմված տեղանունների հետ (Ստ. Կանայանց, Անհայտ գավառներ հին Հայաստանի, էջմիածին, 1914, էջ 178)։

⁹ Г. Капанцян, Хайаса — колыбель армян, Ереван, 1947 (այսուհետև՝ ХКА), էջ 128—130, նույնի՝ «Историко-лингвистическое значение топонимии древней Армении», Ереван, 1940 (այսուհետև՝ ИЛЗТДА), էջ 66—67, նույնի՝ Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1963, էջ 33։

¹⁰ Բ. Ուլուբաբյան, Պատմա-աշխարհագրական ճշտումներ (Երևանի Երևանի համալսարանի, 1971, № 1, էջ 178—180)։

ն. Ադոնցի կարծիքի օգտին է խոսում միայն այն, որ աշխարհագրականորեն Բաղասականը ավելի մոտ է եղել Սյունիքին, քան պալա (բալա) ցեղի նախահայրենիքը: Ամենայն հավանականությամբ, Բաղասականի հետ առնչություն ունեն և միևնույն էթնիկական անունից՝ բաղասիճներից են ծագում նաև Արցախի Վերին Խաչեն գավառի Բաղասատ¹¹, Այրարատի Բալասձոր տեղանունները¹²: Այս տեղանուններում ակնհայտ է «աս» մասնիկը, որը բացակայում է Սյունիքում «բաղ» արմատ ունեցող տեղանուններում: Հետևապես Բաղասական, Բաղասատ, Բալասձոր տեղանուններում արմատն է «բաղաս»-ը և նրանք Բաղք տեղանվան հետ կապ չունեն:

Ավելի հավանական է թվում Գ. Ղափանցյանի կարծիքը, թեև հնարավոր է, որ նրա հիշատակած տեղանուններից շատերը էթնիկական ծագում չունենան և չկապվեն Բաղք տեղանվան հետ¹³: Գ. Ղափանցյանի կարծիքում հավանական չի թվում միայն պալա (բալա) ցեղի գաղթը կիմերների ճնշման հետևանքով, որովհետև նրանք Հայկական լեռնաշխարհ կարող էին թափանցել հյուսիսից՝ Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի անցումներով, որի դեպքում բացառվում է նրանց գաղթը դեպի Սյունիք:

Պալա ցեղի և Սյունիքի Բաղք տեղանվան աղերսը պետք է բացատրել այլ կերպ, որին կանգրադառնանք ստորև:

Գ. Ղափանցյանը անդրադարձել է նաև Մյուս Բաղք գավառի Քաշունիք¹⁴ անվան և Սյունյաց Քաշի մարզ¹⁵, Քաշաթաղ¹⁶ անունների ստուգաբանությանը

¹¹ Այս տեղանունը հիշվում է ինչպես «Բ... գատու» («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 81), այնպես էլ «Բախադատու» («Մոսկովիսի Կադանկատուց Պատմություն Ադուանից աշխարհի», Սոսկվա, 1860, էջ 94), կամ «Բաղասատ» ձևերով (Մոսկովիսի Կադանկատուց Պատմություն Ադուանից աշխարհի, Թարգմանությունը և առաջաբանը Վ. Ա. Կարելյանի, Երևան, 1969), էջ 92, ծան. 138, էջ 282). Թարգմանությունների մեջ սույն տեղանունը տրված է որպես «Багааг» կամ «Багахот» («История Агван Монсея Каланкатвази, писателя X века», СПб., 1861, էջ 363), «Boxatat» («The history of Caucasian Albanians by Movses Dasxuranci» translated by D. I. F. Dowsett, London, 1961, էջ 72): Այս տեղանունը Մ. Բարխուդարյանը հիշատակում է Արցախի Սիսական-Նստան (Սիսական, Մար, Վերին Խաչեն) գավառում՝ «Բաղասաղ» ձևով (Մ. Բարխուդարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 404): Քանի որ տեղանվան իսկությունը պարզելու համար նշանակություն ունի տեղացիների կողմից արտասանվող ձևը, որը առկա է Մ. Բարխուդարյանի մոտ և նկատի ունենալով անվան «ատա» վերջավորությամբ հիշատակությունները տարբեր սկզբնաղբյուրներում, կարելի է ասել, որ տեղանվան ճիշտ ձևը եղել է Բաղասատ, որտեղ «ղա»-ն, ամենայն հավանականությամբ, եղել է «տա» վերջինս տպագրական սխալ պետք է համարել:

¹² Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 78:

¹³ Վերոհիշյալ տեղանուններից Պաղինը կապվում է «Բագին»-ի (Վ. Վալադյան, Պաղինը պատմության մեջ—Պատմություն Պաղնաասան, Բոսթոն, 1966, էջ 9), Բալու տեղանունը՝ Բաշկուտի նաև բալի ծագանվան հետ (Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 372): Ը. Երեմյանի կարծիքով Ղարաբաղ տեղանունը ձագում է Բաղակարան տեղանվան հետագա այլափոխումից (Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և 7-րդ դարի հայոց «Աշխարհացոյց»-ը («Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 90), հմտ. «Վրաց ժամանակագրություն (1201—1318)», Թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 201, ծան. 64): Բ. Ուլուբարյանն անընդունելի է համարել Բաղակարան—Ղարաբաղ ստուգաբանությունը (Բ. Ա. Ուլուբարյան, Խաչենի իշխանությունը 10—16-րդ դարերում, Երևան, 1975, էջ 40—44):

¹⁴ Ստեփանոս Օրբելյան, էջ 518:

¹⁵ Քաշի մարզ էր կոչվում Վայոց ձոր գավառի բնակավայրերից մեկը (Ստեփանոս Օրբելյան, էջ 512):

¹⁶ Աղահեճք գավառը Ս. Օրբելյանի ապրած ժամանակաշրջանում բաժանված էր Քաշա-

և նրանց վերագրել էթնիկական ծագում: Նա այդ անունները բխեցնում է մ. թ. ա. XV դ. խեթական արձանագրություններում հիշատակվող *gašga*, *kašga* կամ *kaška* ժողովրդի անունից, որը ապրում էր վերին նփրատից մինչև Ազգի երկիրը ընկած շրջաններում¹⁷:

Մեր կարծիքով այս անունները, բացառությամբ Քաշունիքի (որտեղ Քաշ-ը ցեղանունն է, ուել-ն թերևս ուրարտեանից ծագած տեղանուն ցույց տվող ածանց, իսկ Է-ն հայերեն տեղանվանակերտ ածանց), էթնիկական ծագում չունեն, քանի որ դրանք կաբելի է բացատրել գլխավորապես տվյալ շրջանի բարբառով կամ խոսվածքի տվյալներով: Ղափանի շրջանի խոսվածքում գոյություն ունի «քաշին արտ» արտահայտություն, որը նշանակում է «ենբրեկի, ցածի արտ»: Այս արտահայտությունը նույն իմաստով գործածվում է նաև Գորիսի շրջանում՝ «քաշի արտ»: Ողջի գետի աջակողմյան վտակներից մեկը նրա վերին հոսանքների շրջանում, Ղափանի շրջանի Լեռնաձոր գյուղի մոտ, Լեռնաձորի և շրջակա բնակավայրերի բնակիչների կողմից կոչվում է «Քաշի ձոր» կամ «Քաշին ձոր», այսինքն՝ ներբեկի, ցածի ձոր¹⁸: Զանգեզուրի մյուս շրջաններում ևս «քաշ» բառը իր մի քանի իմաստներից բացի օգտագործվում է նաև «ենբրեկ, ցած» նշանակությամբ¹⁹: Հավանական է, որ Քաշի մարզը նույնպես նույն իմաստը ունենա: Ըստ երևույթին, այս բնակավայրը իր անունը ստացել է մարզից, որն իր դիրքի պատճառով է կոչվել Քաշի (ներբեկի, ցածի) մարզ և երբ այդտեղ ժամանակին կառուցվել է բնակավայր, այդ անունն անցել է նաև նրան:

Համեմատության համար կարելի է հիշել նման կազմություն ունեցող Մանուշակի մարզ անունը կրող բնակավայրը Կովսական գավառում²⁰, ինչպես նաև Գորիսի շրջանի Տանձատափ գյուղի մոտ գտնվող Իրիցու (Երեցի) մարզ կոչվող գյուղատեղի անունը: Ամենայն հավանականությամբ, Քաշաթաղ անունը նույնպես էթնիկական ծագում չունի, որը Զանգեզուրի շրջանների խոսվածքներում նշանակում է «ենբրեկի, ցածի թաղ» (քաշի թաղ): Հետաքրքրական է նշել, որ Տաթևի վանքի հարկատու գյուղերի հին ցուցակում Աղահեճք գավառի գյուղերի թվում կողք-կողքի հիշատակվում են «Քաշաթաղ» և «Վերին շեն» գյուղեր²¹: Այս ուշագրավ փաստը ենթադրել է տալիս, որ ժամանակին իրար մոտ գտնվելիս են եղել երկու բնակավայր, որոնցից մեկը իր աշխարհագրական դիրքի շնորհիվ կոչվել է «Վերին շեն» (բարձրում գտնվող շեն), իսկ մյուսը՝ Քաշաթաղ (այսինքն՝ ներբեկի, ցածի թաղ): Բնակավայրի Քաշաթաղ անունը, ամենայն հավանականությամբ, փոխանցվել է նրա մոտ գտնվող բերդին, որը Ս. Օրբելյանի մոտ կոչվում է «Քաշեթաղուց բերդ»²² և հետագայում դարձել է նշանավոր բնակավայր և գավառի կենտրոն, որի անունով կոչվել է նաև ամբողջ գավառը:

Թաղ և խոթոարբերդ գավառների, որը հայտնի չէ ե՞րբ է կատարվել. «Աղահեճք գավառ, որ այժմ կոչի Քաշաթաղ և խոթոարբերդ» (Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ յ ա ն, էջ 12):

17 ИЛІЗТІА, էջ 67—68, ХКА, էջ 131—134:

18 Այս տեղեկությունը իմացել ենք պրոֆ. Թ. Հակոբյանից:

19 Հմմտ. Հ. Խ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Երևան, 1973, էջ 947, Ս տ. Մ ա լ ի ա ս յ ա ն, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 548:

20 Ս տ ե փ ա ն ն ո ս Օ Ր Բ Ե Լ յ ա ն, էջ 520:

21 Նույն տեղում, էջ 516:

22 Նույն տեղում, էջ 13:

Սյունիքում «բաշ» հիմքով կազմված այլ տեղանուններ որքան մեղ հայտնի է չկան, իսկ մեր նշածները (Քաշի մարզ, Քաշաթաղ գյուղ, Քաշաթաղ գավառ, Բաշթաղուց բերդ, Քաշի ձոր) էթնիկական ծագում չունեն։ Տվյալ գեպքում տեղի է ունեցել աշխարհադրականորեն միմյանց մոտ գտնվող համանման էթնիկական և ոչ էթնիկական անունների շփոթում։

Միանգամայն հնարավոր է, որ բալա և բաշ ցեղերին և այլ էթնիկական խմբեր ուրարտացիները տեղափոխած լինեին Սյունիք, որը նվաճվել էր նրանց կողմից Սարգուրե II-ի (764—735), Ռուսա I-ի (735—714) և Արգիշթե II-ի (714—685) ժամանակներում։ Այս ենթադրության համար կան որոշ հիմքեր։ Դեռևս Սարգուրե II-ի և Ռուսա I-ի ժամանակներում ուրարտացիները գրավել էին Սեանա լճի շուրջը ընկած շրջանները²³։ 1975 թ. Սիսիանի շրջանի Արեխ գյուղի մոտ (նախնի Մուկ գավառի աարածքում) հայտնաբերվեց Արգիշթե II-ին պատկանող սեպագիր արձանագրություն²⁴։ Այս հետաքրքիր փաստը վկայում է այն մասին, որ նախկին Մուկ և նրան սահմանակից Վայոց ձոր, Ծահուկ գավառները, թերևս նաև ամբողջ Սյունիքը նվաճվել էր ուրարտացիների կողմից։ Բնականաբար, ուրարտացիները կորող էին այստեղ տեղափոխել և բնակեցնել իրենց հպատակ որոշ ցեղեր, նվաճված երկրներում հենարան ունենալու համար։

К ВОПРОСУ ОБ ЭТИМОЛОГИИ УЕЗДНЫХ ИМЕН БАГК И КАШУНИК СЮНИКА

АРМЕН КАРАГЕЗЯН

Резюме

Большинство уездных названий средневекового Сюника имеет этническое происхождение, в том числе и Багк. Однако, как известно, данное уездное название происходит от названия различных племен. На наш взгляд, прав Г. Капанцян, согласно которому это название восходит к названию племени пала (pala) или бала (bala), вытесненного киммерами и др. племенами после VIII в. д. н. э. в Сюник.

Г. Капанцян занимался также изучением этимологии уездного названия Кашуник и топонимов с основой «каш», происхождение которых он связывает с названием племени ґаšga, ҡаšga или ҡаšқа.

На основе местного диалекта установлено, что, кроме уездного названия Кашуник, остальные (Кашатаг гавар, Кашатаг гюх, Кашетагуд берд, Каши марг, Каши дзор) не имеют этнического происхождения. В данном случае произошла путаница этнических названий с неэтническими. Исходя из того, что районы, прилегающие к озеру Севан, были завоеваны урартами во времена Сардуре II (764-735), Русы I (735-714)

²³ ИЛЗТДА, էջ 20—23.

²⁴ Н. Арутюнян, К. Оганесян, Стела Аргишти II («Комунист», 24. VIII, 1975).

и Аргиште II (714-685), а также на основе клинописи, найденной в 1975 г. в Сиспанском районе (на территории уезда Цгук) и принадлежавшей Аргиште II, можно утверждать, что Цгук, а также граничащие с ним Вайоц дзор и Джаук, возможно, и весь Сюник были завоеваны урартами. По всей вероятности, эти племена, упоминаемые Г. Капанцяном, были переведены в Сюник урартами в военно-стратегических целях.